



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 141

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կողմից «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի հիման վրա ներկայացված դիմումը, որով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը խնդրել է խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանում տրամադրել ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության վերաբերյալ՝ հատկապես հստակեցնելով, թե ինչպես պետք է իրականացվի նշված դրույթում ամրագրված «երեք օրից ավելի» ժամկետի հաշվարկը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ զինժառայողի կողմից գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալու համար:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ այս հանցագործության օբյեկտը զինվորական ծառայություն անցնելու կարգն է, որը սահմանվում է օրենքներով, զինվորական կանոնադրքերով և կանոնադրություններով: Չորամասի մարտական պատրաստության, մարտունակության և զինվորական

կարգապահության ապահովման համար կարևոր է, որ զինծառայողը միշտ գտնվի ծառայության վայրում, կատարի պետի հրամանը, հանդիսանա ռազմաիրավական հարաբերությունների սուբյեկտ, իսկ զորամասի տարածքը կամ ծառայության այլ վայրը թողնի օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է հետևյալ արարքներից մեկի կատարմամբ՝

ա) զինծառայողը զորամասից բացակայել է կամ առանց հարգելի պատճառների ծառայության չի ներկայացել երեք օրից ավելի, բայց մեկ ամսից պակաս ժամկետով,

բ) զինծառայողը զորամասից բացակայել է կամ առանց հարգելի պատճառների ծառայության չի ներկայացել երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ:

Չորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու պահը համարվում է զինծառայողի կողմից այնտեղից դուրս գալու պահը, իսկ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու պահ է համարվում սահմանված ժամկետում զորամաս կամ սահմանված ծառայության վայր չներկայանալու պահը: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «երեք օրից ավելի» ժամկետի սկիզբը զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու դեպքում՝ զինծառայողի կողմից այնտեղից դուրս գալու պահն է, իսկ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու դեպքում՝ սահմանված ժամկետում զորամաս կամ սահմանված ծառայության վայր չներկայանալու պահը:

3. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե օրենքով կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ապա տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ կիրառվում է այդ օրենքով կամ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված ժամկետների հաշվարկման կարգը»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալու ժամկետների հաշվարկման կարգի առանձնահատկությունները բխում են ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիսպոզիցիայից, ինչպես նաև՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտի և օբյեկտիվ կողմի առանձնահատկություններից՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը գտնում է,

որ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «երեք օրից ավելի» ժամկետը պետք է հաշվարկվի՝

ա) գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու դեպքում՝ զինծառայողի կողմից այնտեղից դուրս գալու պահից սկսած,

բ) առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու դեպքում՝ այն պահից սկսած, երբ անձը պարտավոր էր ներկայանալ գորամաս կամ սահմանված ծառայության վայր:

Հաշվարկն իրականացնելիս օրերն անհրաժեշտ է վերածել ժամերի, մասնավորապես, «երեք օրը» հաշվարկելով որպես «յոթանասուններկու ժամ»:

Հետևաբար, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով, ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «երեք օրից ավելի» ժամկետի հաշվարկը պետք է իրականացվի գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու դեպքում՝ զինծառայողի կողմից այնտեղից դուրս գալու պահից սկսած, իսկ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու դեպքում՝ այն պահից սկսած, երբ անձը պարտավոր էր ներկայանալ գորամաս կամ սահմանված ծառայության վայր:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «երեք օրից ավելի» ժամկետի հաշվարկն իրականացնելիս օրերն անհրաժեշտ է վերածել ժամերի:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2015թ. փետրվարի 05
ք. Երևան